Հայաստանի Հանրապետության Կառավարության և Կատարի Պետության Կառավարության միջև եկամուտների կրկնակի հարկումից խուսափելը կանխելու մասին

Ցանկանալով կնքել եկամուտների կրկնակի հարկումից խուսափելը կանխելու մասին Համաձայնագիր, խթանելու և ամրապնդելու տնտեսական հարաբերությունները երկու երկրների միջև՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Կատարի Պետության կառավարությունը,

Պայմանավորվեցին հետևյալի մասին.

Հոդված 1
Համաձայնագրի գործողությունը անձանց նկատմամբ

Սույն Համաձայնագիրը կիրառվում է Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ հանդիսացող անձանց նկատմամբ:

Հոդված 2
Համաձայնագրի գործողությունը հարկերի նկատմամբ

1. Սույն Համաձայմագիրը կիրառվում է Պայմանավորվող պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանումների կամ տեղական իշխանության մարմինների կողմից սահմանված եկամուտների հարկերի նկատմամբ, անկախ դրանց գանձման եղանակից:

2. Եկամտի հարկեր են համարվում ամբողջ եկամտի կամ եկամտի առանձին տարրերի նկատմամբ սահմանված բոլոր հարկերը:

3. Սույն Համաձայնագիրը կիրառվում է գոյություն ունեցող հետևյալ հարկերի նկատմամբ.

ա) Հայաստանի Հանրապետությունում՝
i) շահութահարկ,
ii) եկամտահարկ,
(հետագայում՝ «հայկական հարկ»)

բ) Կատարի Պետությունում՝
- եկամտի հարկեր,
(հետագայում՝ «կատարական հարկ»):

4. Սույն Համաձայնագիրը կիրառվում է նաև նույնական ըստ էության համանման ցանկացած հարկերի նկատմամբ, որը կսահմանվեն սույն Համաձայնագրի ստորագրումից հետո՝ ի լրումն գոյություն ունեցող հարկերի կամ դրանց փոխարեն:

Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները միմյանց կծանուցեն իրենց համապատասխան հարկային օրենքներում կատարված որևէ նշանակալի փոփոխությունների մասին:

Հոդված 3
Ընդհանուր սահմանումներ

1. Սույն Համաձայնագրի նպատակներով, եթե ենթատեքստը այլ բան չի պահանջում.

a) «Հայաստան» տերմինը նշանակում է Հայաստանի Հանրապետություն, և աշխարհագրական իմաստով օգտագործելիս նշանակում է Հայաստանի Հանրապետության տարածք, ներառյալ ներքին ջրերը, որոնց նկատմամբ տարածվում է Հայաստանի Հանրապետության իրավասությունը և ինքնիշխան իրավունքները,

b) «Կատար» տերմինը նշանակում է Կատարի Պետություն, ցամաք և ներքին և տարածքային ջրեր, ինչպես նաև դրանց վրայի օդային տարածք, և տնտեսական գոտի և մայրցամաքային շելֆ, որոնց նկատմամբ Կատարի Պետությունը իրականացնում է իրավասություն և ինքնիշխան իրավունքներ՝ միջազգային իրավունքի և իր ազգային օրենքների և կանոնակարգումների համաձայն,

c) «Պայմանավորվող պետություն» և «մյուս Պայմանավորվող պետություն» տերմինները, ենթատեքստից կախված, նշանակում են Հայաստան կամ Կատար,

d) «ընկերություն» տերմինը նշանակում է՝ ցանկացած իրավաբանական անձ և ցանկացած այլ միավոր, որը հարկման նպատակներով դիտարկվում է որպես ընկերություն կամ իրավաբանական անձ,

e) «իրավասու մարմին» տերմինը նշանակում է.

i) Հայաստանի դեպքում՝ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարար կամ նրա լիազոր ներկայացուցիչ

ii) Կատարի դեպքում՝ Ֆինանսների նախարար կամ նրա լիազոր ներկայացուցիչ,

f) «Պայմանավորվող պետության ձեռնարկություն» և «մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկություն» տերմինները նշանակում են, համապատասխանաբար Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն,

g) «միջազգային փոխադրում» տերմինը նշանակում է՝ Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից շահագործվող նավով, օդանավով կամ ճանապարհային փոխադրամիջոցով իրականացվող ցանկացած փոխադրում, բացառությամբ այն դեպքերի, երբ նավը, օդանավը կամ ճանապարհային փոխադրամիջոցը շահագործվում է բացառապես մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող վայրերի միջև,

h) «ազգային անձ» տերմինը նշանակում է.

i) Պայմանավորվող պետության քաղաքացիություն ունեցող ցանկացած ֆիզիկական անձ,

ii) Պայմանավորվող պետության գործող օրենքներով իր կարգավիճակը ստացած ցանկացած իրավաբանական անձ, ընկերություն կամ ասոցիացիա,

i) «հարկ» տերմինը, ենթատեքստից կախված, նշանակում է կատարական հարկ կամ հայկական հարկ

k) «ձեռնարկատիրական գործունեություն» տերմինն ներառում է մասնագիտական ծառայությունների և անկախ բնույթի այլ գործունեության մատուցում:

2. Պայմանավորվող պետության կողմից սույն Համաձայնագրի դրույթները կիրառելիս, դրանում չսահմանված ցանկացած տերմին, եթե ենթատեքստը այլ բան չի պահանջում, ունի այն նշանակությունը, որը նրան այդ պետության օրենքով տրված է այն հարկերի առնչությամբ, որոնց նկատմամբ կիրառվում է Համաձայնագիրը

Հոդված 4
Ռեզիդենտ

1. Սույն Համաձայնագրի նպատակներով «Պայմանավորվող պետության ռեզիդենտ» տերմինը նշանակում է՝ ցանկացած անձ, որն, այդ պետության օրենքների համաձայն, ենթակա է հարկման այդ պետությունում իր մշտական բնակության, բնակման ստեղծման վայրի, ղեկավարման վայրի կամ որևէ այլ համանման չափանիշի հիման վրա և ներառում է նաև այդ պետությունը և նրա ցանկացած քաղաքական ստորաբաժանումը կամ տեղական իշխանության մարմինը: Այդ տերմինը, ինչևիցէ, չի ներառում որևէ անձի, որը ենթակա է հարկման այդ պետությունում միմայն այդ պետության աղբյուրներից ստացված եկամտի կամ այդ պետությունում գտնվող գույքի հիման վրա:

2. Այն դեպքում, երբ նախորդ կետի դրույթների համաձայն ֆիզիկական անձը հանդիսանում է երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ նրա կարգավիճակը որոշվում է հետևյալ կերպ.

a) նա համարվում է միայն այն Պայմանավորվող պետության ռեզիդենտը, որտեղ մշտպես բնակվում է: Սակայն, եթե նա մշտպես բնակվում երկու Պայմանավորվող պետություններում, ապա համարվում է միայն այն Պայմանավորվող պետության ռեզիդենտը, որտեղ գտնվում է նրա կենսական շահերի կենտրոնը,

b) եթե հնարավոր չէ որոշել այն Պայմանավորվող պետությունը, որտեղ գտնվում է նրա կենսական շահերի կենտրոնը, կամ եթե նա Պայմանավորվող պետություններից ոչ մեկում մշտապես չի բնակվում, նա համարվում է միայն այն Պայմանավորվող պետության ռեզիդենտը, որտեղ սովորաբար բնակվում է,

c) եթե նա սովորաբար բնակվում է երկու Պայմանավորվող պետություններում էլ, կամ նրանցից և ոչ մեկում, նա համարվում է միայն այն պետության ռեզիդենտը, որի քաղաքացին է.

d) եթե ֆիզիկական անձի ռեզիդենտության կարգավիճակը հնարավոր չէ որոշել վերը նշված ենթակետերի դրույթներին համապատասխան, ապա երկու Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները հարցը կլուծեն փոխադարձ համաձայնությամբ:

3. Այն դեպքում, երբ 1-ին կետի դրույթներին համապատասխան ֆիզիկական անձից տարբերվող անձը հանդիսանում է երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ, ապա նա համարվում է միայն այն պետության ռեզիդենտը, որտեղ գտնվում է փաստացի ղեկավարման վայրը:

Հոդված 5
Մշտական հաստատություն

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով «մշտական հաստատություն» տերմինը նշանակում է գործունեության կայուն վայր, որի միջոցով ամբողջությամբ կամ մասամբ իրականացնում է ձեռնարկության ձեռնարկատիրական գործունեությունը:

2. «Մշտական հաստատություն» տերմինը հատկապես ներառում է.

a) ղեկավարման վայր,

b) մասնաճյուղ,

c) գրասենյակ,

d) գործարան,

e) արհեստանոց,

f)ապրանքների պահեստ

g)առևտրի կետ

h)ֆերմա կամ մրգատու այգի

i) հանքահոր, նավթի կամ գազի հորատանցք, քարհանք կամ բնական պաշարների արդյունահանելու, շահագործելու կամ մշակելու ցանկացած այլ վայր, և

j) Շինարարական հրապարակ, կառուցման, հավաքման կամ տեղակայման օբյեկտը, կամ այդպիսի հրապարակի կամ օբյեկտի հետ կապված վերահսկողական գործունեություն բայց միայն այն դեպքում, երբ այդպիսի հրապարակի, օբյեկտի կամ գործունեության տևողությունը գերազանցում է 9 ամիսը:

3. Չնայած սույն հոդվածի նախորդ կետերի դրույթներին, «մշտական հաստատություն» տերմինը չի ներառում.

a) հարմարությունների օգտագործումը ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի բացառապես պահեստավորման կամ ցուցադրման նպատակով,

b) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահպանումը բացառապես պահեստավորման կամ ցուցադրման նպատակով,

c) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահպանումը այլ ձեռնարկության կողմից բացառապես մշակման նպատակով,

d) գործունեության կայուն վայրի պահպանումը բացառապես ձեռնարկության համար ապրանքների կամ արտադրանքի գնման կամ տեղեկությունների հավաքման նպատակով,

e) գործունեության կայուն վայրի պահումը բացառապես ձեռնարկության համար նախապատրաստական կամ օժանդակ բնույթի ցանկացած այլ գործունեություն իրականացնելու նպատակով:

4. Չնայած 1 և 2 կետերի դրույթներին, այն դեպքում, երբ անկախ կարգավիճակով գործակալ համարվող անձից (որին վերաբերում են 6 կետը) տարբերվող անձը գործում է ձեռնարկության անունից և ունի ու սովորաբար օգտագործում է Պայմանավորվող պետությունում այդ ձեռնարկության անունից պայմանագրեր կնքելու իրավասություն, ապա այդ ձեռնարկությունը համարվում է մշտական հաստատություն այդ պետությունում՝այդ անձի կողմից տվյալ ձեռնարկության համար իրականացվող ցանկացած գործունեության կապակցությամբ, բացառությամբ, երբ այդպիսի անձի գործունեությունը սահմանափակվում է 3-րդ կետում նշվածով, որն եթե անգամ և իրականացվում են գործունեության կայուն վայրի միջոցով, այդ կետի դրույթների համաձայն այդ գործունեության կայուն վայրը չի վերածվում մշտական հաստատության:

5 Անկախ սույն հոդվածի նախորդ դրույթներից, Պայմանավորվող պետության ապահովագրական ընկերությունը, բացառությամբ վերաապահովագրական դեպքերի, համարվում է մյուս Պայմանավորվող Պետությունում մշտական հաստատություն ունեցող, եթե այն այդ մյուս Պայմանավորվող պետության տարածքում անկախ կարգավիճակով գործակալ հանդիսացեղ անձից (որին վերաբերում է 6 կետը) տարբերվող անձի միջոցով ընդունում է ապահովագրավճարներ կամ ապահովագրում է այնտեղ տեղակայված ռիսկերից:

6. Ձեռնարկությունը չի համարվում մշտական հաստատություն ունեցող Պայմանավորվող պետությունում միայն այն պատճառով, որ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ պետությունում բրոքերի, գլխավոր կոմիսիոն գործակալի կամ անկախ կարգավիճակ ունեցող ցանկացած այլ գործակալի միջոցով, պայմանով, որ այդպիսի անձինք գործում են իրանց սովորական ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում:

7. Այն փաստը, որ Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը վերահսկում է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությանը կամ վերահսկվում է նրա կողմից, կամ ձեռնարկատիրական

գործունեություն է իրականացնում այդ մյուս պետությունում (մշտական հաստատության միջոցով կամ այլ կերպ), ինքնըստինքյան այդ ընկերություններից մեկին չի դարձնում մյուսի մշտական հաստատության:

Հոդված 6
Եկամուտ անշարժ գույքից

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից՝ ներառյալ գյուղատնտեսությունից կամ անտառային տնտեսությունից ստացած եկամուտը, կարող է հարկվել այդ մյուս պետությունում: Այդ տերմինը, ամեն դեպքում, ներառում է անշարժ գույքին օժանդակ գույքը, գյուղատնտեսությունում և անտառային տնտեսությունում օգտագործվող անասունն ու սարքավորումները, իրավունքները, որոնց նկատմամբ կիրառվում են հողային սեփականությանը վերաբերող ընդհանուր օրենսդրության դրույթները, անշարժ գույքի ուզուֆրուկտը և օգտակար հանածոների հանքատեղերի, հանքավայրերի և այլ բնական պաշարների շահագործման կամ շահագործման իրավունքի դիմաց փոխհատուցման կարգով վճարվող փոփոխական կամ հաստատուն վճարումների իրավունքները: Նավերը, օդանավերը, և ճանապարհային փոխադրամիջոցները որպես անշարժ գույք չեն դիտարկվում:

3. 1 կետի դրույթները կիրառվում են անշարժ գույքի ուղղակի օգտագործումից, վարձակալության տրամադրելուց կամ ցանկացած այլ ձևով օգտագործելուց ստացված եկամուտների նկատմամբ:

4. 1 և 3 կետերի դրույթները կիրառվում են նաև ձեռնարկության անշարժ գույքից ստացված եկամուտների նկատմամբ և անկախ անձնական ծառայություններ մատուցելու համար օգտագործված անշարժ գույքից եկամուտների նկատմամբ:

Հոդված 7
Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության շահույթը ենթակա է հարկման միմիայն այդ պետությունում, եթե այդ ձեռնարկությունը իր ձեռնարկատիրական գործունեությունը մյուս Պայմանավորվող պետությունում չի իրականացնում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով: Եթե ձեռնարկությունը իրականացնում է ձեռնարկատիրական գործունեությունը վերը նշված ձևով, ապա ձեռնարկության շահույթը կարող է հարկվել մյուս պետությունում, բայց միայն այն չափով, որը վերագրելի է այդ մշտական հաստատությանը:

2. Հաշվի առնելով 3 կետի դրույթները, այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության ձեռնարկությունը մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով այնտեղ իրականացնում է ձեռնարկատաիրական գործունեություն, ապա յուրաքանչյուր Պայմանավորվող պետությունում այդ մշտական հաստատությանը վերագրվում է այն շահույթը, որը այն կարող էր ստանալ նույն կամ համանման պայմաններում իրականացնելով նույն կամ համանման գործունեություն՝ լինելով ինքնուրույն ու առանձին ձեռնարկություն և գործելով միանգամայն անկախ այն ձեռնարկությունից, որի մշտական հաստատությունն է հանդիսանում:

3. Մշտական հաստատության շահույթը որոշելիս թույլատրվում է նվազեցում համարել այդ մշտական հաստատության նպատակներով կրած այն ծախսերը, ներառյալ այդ նպատակներով կրած կառավարչական և ընդհանուր վարչական

ծախսերը, որոնք թույլատրվում են այն Պայմանավորվող պետությունան ներքին օրենքով, որտեղ գտնվում է այդ մշտական հաստատությունը՝ անկախ այն բանից, կատարված են դրանք այն պետությունում , որտեղ գտնվում է այդ մշտական հաստատությունը, թե այլուր:

4. Եթե Պայմանավորվող պետությունում ընդունված է որոշել մշտական հաստատությանը վերագրվող ձեռնարկության ամբողջ շահույթն իր տարբեր ենթամասերի միջև համամասնական բաշխման հիման վրա, ապա 2 կետը ոչ մի կերպ չի արգելում այդ Պայմանավորվող պետությանը որոշել հարկման ենթակա շահույթը ընդունված բաշխման եղանակով: Այնուամենայնիվ, ընդունված բաշխման եղանակը պետք է լինի այնպիսին, որ արդյունքը համապատասխանի սույն հոդվածի սկզբունքներին:

5. Մշտական հաստատության կողմից ձեռնարկության համար բացառապես ապրանքների կամ արտադրանքի գնումը հիմք չի հանդիսանում այդ մշտական հաստատությանը որևէ շահույթ վերագրելու համար:

6. Նախորդ կետերի նպատակներով մշտական հաստատությանը վերագրվող շահույթը տարեց տարի որոշվում է միևնույն եղանակով, եթե այլը անելու համար չկա հիմնավոր և բավարար պատճառ:

7. Այն դեպքում, երբ շահույթը ներառում է եկամտի այնպիսի տարրեր, որոնք առանձին քննարկված են սույն Համաձայնագրի այլ հոդվածներում, ապա սույն հոդվածի դրույթները չեն ազդում այդ հոդվածների դրույթների վրա:

Հոդված 8
Միջազգային փոխադրումներ

1. Միջազգային փոխադրումներում նավերի, օդանավերի կամ ճանապարհային փոխադրամիջոցների շահագործումից առաջացած շահույթը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է ձեռնարկության փաստացի ղեկավարման վայրը:

2. Վերը նշված կետի դրույթները կիրառվում են նաև այլ օդային, նավագնացային կամ ճանապարհային ընկերությունների շահույթի նկատմամբ, բայց միայն այն չափով, որը համապատասխանում է Պայմանավորվող պետություններից երևէ մեկի նշված ընկերություններում ունեցած բաժնեմասին:

3. Նախորդ կետի դրույթները կիրառվում են նաև միավորումում, համատեղ ձեռնարկությունում կամ միջազգային շահագործող գործակալությունում մասնակցությունից ստացած շահույթի նկատմամբ:

Հոդված 9
Փոխկապակցված ձեռնարկություններ

1. Այն դեպքում, երբ՝

a) Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում է մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում, կամ

b) միևնույն անձինք ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում են Պայմանավորվող պետության ձեռնարկության և մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում,

և երկու դեպքում էլ երկու ձեռնարկությունների միջև նրանց առևտրային կամ ֆինանսական փոխհարաբերություններում ստեղծված կամ սահմանված են անկախ ձեռնարկությունների միջև ստեղծված պայմաններից տարբերվող պայմաններ, ապա ցանկացած շահույթ, որը կհաշվեգրվեր նրանցից մեկին, բայց այդ պայմանների

պատճառով նման ձևով չի հաշվեգրվել, կարող է ներառվել այդ ձեռնարկության շահույթի մեջ և, համապատասխանաբար հարկվել:

2. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետությունը այդ Պետության ձեռնարկության շահույթի մեջ ներառում և համապատասխանաբար հարկում է այն շահույթը, որից մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ենթարկվել է հարկման այդ մյուս Պետությունում, և այդ ձևով ներառված շահույթն այն շահույթն է, որը հաշվեգրված կլիներ առաջինը հիշատակված պետության ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջև լինեին անկախ ձեռնարկություններին բնորոշ փոխհարաբերություններ, ապա այդ մյուս պետությունը կատարում է այդ շահույթից իր կողմից գանձված հարկի գումարի համապատասխան ճշգրտում, եթե այդ մյուս Պետությունը գտնում է ճշգրտումն արդարացի: Այդպիսի ճշգրտումը որոշելիս հաշվի են առնվում սույն Համաձայնագրի այլ դրույթները, և Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները անհրաժեշտության դեպքում կարող են խորհրդակցել միմյանց հետ:

Հոդված 10
Շահաբաժիններ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված շահաբաժինները կարող են հարկվել այդ մյուս պետությունում:

2. Սակայն այդպիսի շահաբաժինները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում շահաբաժինները վճարող ընկերությունը՝ այդ պետության օրենքներին համաձայն, բայց եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, ապա այդ ձևով գանձված հարկը չպետք է գերազանցի.

a) շահաբաժինների համախառն գումարի հինգ տոկոսը (5 %), եթե ներդրված կապիտալը գերազանցում է հարյուր հազար (100 000) ԱՄՆ դոլար,

b) շահաբաժինների համախառն գումարի տաս տոկոսը (10%)՝ բոլոր այլ դեպքերում:

Սույն կետը չի ազդում ընկերության հարկմանը այն շահույթի նկատմամբ, որից վճարվում են շահաբաժինները:

3. «Շահաբաժիններ» տերմինը սույն հոդվածում օգտագործելիս նշանակում է՝ եկամուտ բաժնետոմսերից կամ պարտապահանջ չհանդիսացող՝ շահույթին մասնակցելու իրավունք տվող այլ իրավունքներից, ինչպես նաև եկամուտ այլ բաժնետիրական իրավունքներից, որը ենթակա են նույնպիսի հարկային կարգավորման, ինչպես բաժնետոմսերից առաջացած եկամուտը՝ համաձայն այն Պայմանավորվող պետության օրենքների, որի ռեզիդենտ է հանդիսանում բաշխումն իրականացնող ընկերությունը:

4. 1 և 2 կետերի դրույթները չեն կիրառվում, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը, հանդիսանալով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտ է հանդիսանում շահաբաժիններ վճարող ընկերությունը, այդ մյուս պետությունում գտնվող մշտական հաստատության միջոցով և մասնակցությունը, որի համար վճարվում են շահաբաժինները, իրապես կապված են այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7 հոդվածի դրույթները:

5. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը շահույթ կամ եկամուտ է ստանում մյուս Պայմանավորվող

պետությունում, ապա այդ մյուս Պետությունը չի կարող ենթարկվել որևէ հարկման ընկերության կողմից վճարված շահաբաժինները, բացառությամբ, երբ այդպիսի շահաբաժինները վճարվում են այդ մյուս պետության ռեզիդենտին, կամ երբ մասնակցությունը, որի հետ կապված վճարվում են շահաբաժինները, իրապես կապված են այդ մյուս պետությունում գտնվող մշտական հաստատության հետ, և չի կարող ընկերության չբաշխված շահույթը հարկման ենթարկել ընկերության չբաշխված շահույթից գանձվող հարկով, եթե անգամ վճարված շահաբաժինները կամ չբաշխված շահույթը ամբողջությամբ կամ մասամբ կազմված են այդ մյուս պետությունում առաջացող շահույթից կամ եկամտից:

Հոդված 11
Տոկոսներ

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված տոկոսները կարող են հարկվել այդ մյուս պետությունում:

2. Սակայն այդպիսի տոկոսները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են՝ այդ պետության օրենքների համաձայն, բայց եթե տոկոսների փաստացի սեփականատերը, մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, ապա այդ ձևով գանձվող հարկը չպետք է գերազանցի տոկոսների համախառն գումարի հինգ (5%) տոկոսը:

3. Անկախ 2-րդ կետի դրույթներից՝

a) Պայմանավորվող պետությունում առաջացող տոկոսներն այդ պետությունում ազատվում են հարկումից, եթե դրանք ստանում է և փաստացի սեփականատեր է հանդիսանում:

(i) մյուս Պայմանավորվող պետության կառավարությունը, կամ նրա քաղաքական ստորաբաժանումը կամ տեղական իշխանության մարմինը, կամ իրավասու մարմինների համաձայնությամբ՝ այդ պետության, կամ նրա քաղաքական ստորաբաժանման կամ տեղական իշխանության մարմնի ցանկացած գործակալություն կամ հաստատություն,

(ii) մյուս Պայմանավորվող պետության Կենտրոնական բանկը,

b)Պայմանավորվող պետությունում առաջացող տոկոսներն այդ պետությունում ազատվում են հարկումից եթե դրանց փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է և այդ տոկոսները ստացվում են առաջինը հիշատակված պետության կառավարության կողմից հաստատված կամ երաշխավորված փոխառության կամ վարկի դիմաց:

4. «Տոկոսներ» տերմինը սույն հոդվածում օգտագործելիս նշանակում է եկամուտ ցանկացած տեսակի պարտապահանջներից, անկախ հիպոթեքային ապահովումից և անկախ պարտապանի շահույթին մասնակցության իրավունքի առկայությունից, և, մասնավորապես, եկամուտ կառավարական արժեթղթերից և եկամուտ պարտատոմսերից կամ փոխառության տոմսերից, ներառյալ այդպիսի արժեթղթերի, պարտատոմսերի և փոխառության տոմսերի հետ կապված պարգևավճարներն ու մրցանակները: Ժամկետանց վճարման համար գանձվող տույժերը սույն հոդվածի նպատակներով որպես տոկոսներ չեն դիտարկվում:

5. 1, 2 և 3 կետերի դրույթները չեն կիրառվում, եթե տոկոսների փաստացի սեփականատերը, հանդիսանալով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են տոկոսները՝ այդ մյուս պետությունում գտնվող

մշտական հաստատության միջոցով և պարտապահանջը, որի կապակցությամբ վճարվում են տոկոսները, իրապես կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում, կիրառվում են 7 հոդվածի դրույթները:

6. Տոկոսները համարվում են առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն այդ Պետության ռեզիդենտ է: Սակայն, այն դեպքում, երբ տոկոսներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն որի կապակցությամբ առաջացել է պարտքը, որի տոկոսները վճարվում են, և այդպիսի տոկոսների վճարման ծախսերը կրում է այդ մշտական հաստատությունը ապա այդպիսի տոկոսները համարվում են առաջացած այն պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը:

7. Այն դեպքում, եթե վճարողի և փաստացի սեփականատիրոջ, կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով, պարտապահանջին վերաբերող վճարվող տոկոսների գումարը գերազանցում է այն գումարին, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքներին համապատասխան՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի այլ դրույթները:

Հոդված 12
Ռոյալթի

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարվող ռոյալթին կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. Սակայն, այդպիսի ռոյալթին կարող է հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ այն առաջանում է՝ այդ պետության օրենքներին համապատասխան, սակայն եթե ռոյալթիի փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, ապա այդ ձևով գանձվող հարկը չպետք է գերազանցի ռոյալթիի համախառն գումարի 5 տոկոսը (5%):

3. «Ռոյալթի» տերմինը սույն հոդվածում օգտագործելիս նշանակում է փոխհատուցման ձևով ստացած ցանկացած տեսակի վճարում՝ ցանկացած գրական, արվեստաբանական կամ գիտական աշխատանքների հեղինակային իրավունքի (ներառյալ կինոնկարների կամ ռադիո կամ հեռուստատեսային հաղորդումների հեռարձակման համար օգտագործվող ֆիլմերի կամ ձայներիզների), ցանկացած պատենտի, ապրանքային նշանի, նախագծի կամ մոդելի, գծագրի, գաղտնի բանաձևի կամ գործընթացի, կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական սարքավորման օգտագործման կամ օգտագործման իրավունքի համար, կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական փորձին վերաբերող տեղեկության համար:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե ռոյալթիի փաստացի սեփականատերը, հանդիսանալով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում է ռոյալթին՝ այդ մյուս պետությունում գտնվող մշտական հաստատության միջոցով, և իրավունքը կամ գույքը, որոնց կապակցությամբ վճարվում է ռոյալթին, իրականում կապված են այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածների դրույթները:

5. Ռոյալթին համարվում է առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն այդ պետության ռեզիդենտ է: Սակայն, այն դեպքում, երբ ռոյալթի վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն որի կապակցությամբ առաջացել է ռոյալթի վճարելու պարտավորությունը, և այդպիսի ռոյալթիի վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը, ապա այդպիսի ռոյալթին համարվում է առաջացած այն պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը:

6. Այն դեպքում, երբ վճարողի և փաստացի սեփականատիրոջ, կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով, օգտագործման, իրավունքի կամ տեղեկության համար վճարվող ռոյալթիի գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը ենթակա է հարկման յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքներին համապատասխան՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի այլ դրույթները:

Հոդված 13
Գույքի արժեքի հավելաճ

1. 6 Հոդվածում նշված և մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքի օտարումից Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած արժեքի հավելաճը կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. Մյուս Պայմանավորվող պետությունում՝ Պայմանավորվող պետության ձեռնարկությանը պատկանող մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքի կամ մյուս Պայմանավորվող պետությունում անկախ անձնական ծառայությունների մատուցման նպատակով Պայմանավորվող պետության ռեզիդենտի ունեցած հաստատուն բազային պատկանող շարժական գույքի օտարումից առաջացած արժեքի հավելաճը, ներառյալ այդպիսի մշտական հաստատության (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ մեկտեղ) կամ այդպիսի հաստատուն բազայի օտարումից առաջացած այդպիսի արժեքի հավելաճը կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

3. Միջազգային փոխադրումներում Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից շահագործող նավերի, օդանավերի կամ ճանապարհային փոխադրամիջոցների, կամ այդպիսի նավերի, օդանավերի կամ ճանապարհային փոխադրամիջոցների շահագործմանը վերաբերող շարժական գույքի օտարումից առաջացած արժեքի հավելաճը ենթակա է հարկման միայն այդ պետությունում:

4. 1, 2 և 3 կետերում հիշատակված գույքից տարբերվող ցանկացած այլ գույքի օտարումից առաջացած արժեքի հավելաճը, ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտ է հանդիսանում օտարող անձը:

Հոդված 14
Եկամուտ վարձու աշխատանքից

1. Հաշվի առնելով 15, 17 և 18 հոդվածների դրույթները, Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից վարձու աշխատանքի դիմաց ստացված աշխատավարձը, ռոճիկը և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ պետությունում, եթե միայն այդպիսի վարձու աշխատանքը չի իրականացվում մյուս

Պայմանավորվող պետությունում: Եթե վարձու աշխատանքը իրականացվում է այդ կերպ, ապա դրա հետ կապված վարձատրությունը կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. Չնայած 1 կետի դրույթներին, Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը ենթակա է հարկման միայն առաջինը հիշատակված պետությունում, եթե.

a) ստացողը դիտարկվող ֆինանսական տարում սկսվող կամ ավարտվող ցանկացած տասներկու ամսյա ժամանակահատվածում մյուս Պետություն է գտնվում ընդհանուր առմամբ 183 օրը չգերազանցող ժամանակահատվածում կամ ժամանակահատվածներում և

b) վարձատրությունը վճարվում է մյուս պետության ռեզիդենտ չհանդիսացող գործատուի կողմից կամ նրա անունից և

c) վարձատրության ծախսերը չի կրում մյուս պետությունում գործատուի ունեցած մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան:

3. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին, միջազգային փոխադրումներում շահագործվող նավի, օդանավի կամ ճանապարհային փոխադրամիջոցների վրա իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացվող վարձատրությունը կարող է հարկվել այն Պայմանավորվող պետությունում, գտնվում է ձեռնարկության փաստացի ղեկավարման վայրը:

4. Մյուս Պայմանավորվող պետությունում տեղակայված Պայմանավորվող պետության օդային, նավագնացության կամ ճանապարհային փոխադրամիջոցների ձեռնարկության վարձու աշխատողի ստացած աշխատավարձը, պարգևավճարները և չնախատեսված եկամուտները ենթակա են հարկման այն Պայմանավվող պետությունում, որտեղ գտնվում է ձեռնարկության փաստացի ղեկավարման վայրը: Սակայն, այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության և այն պետության միջև, որի ռեզիդենտ է հանդիսանում վարձու աշխատողը, գործողության մեջ է կրկնակի հարկումը բացառելու մասին համաձայնագիրը, ապա այդպիսի վարձու աշխատողը հարկվում է այդպիսի համաձայնագրի դրույթներին համապատասխան:

Հոդված 15
Տնօրենների հոնորարներ

1. Որպես մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության տնօրենների խորհրդի անդամ՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ստացված տնօրենների հոնորարները և այլ համանման վճարումները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Որպես մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության գլխամասային կառավարման պատոնատար անձի՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ստացված աշխատավարձը և այլ համանման վարձատրությունները կարող են հարկվել այդ մյուս պետությունում:

Հոդված 16
Արտիստներ և մարզիկներ

1. Չնայած 7 և 14 հոդվածների դրույթներին, Պայմանավորվող պետության ռեզիդենտի մյուս Պայմանավորվող պետությունում որպես արվեստի գործիչ (ինչպիսին է թատրոնի, կինոյի, ռադիոյի կամ հեռուստատեսության արտիստը կամ

երաժիշտը) կամ որպես մարզիկ իրականացրած անձնական գործունեությունից ստացած եկամուտը կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. Այն դեպքում, երբ արվեստի գործչի կամ մարզիկի՝ որպես այդպիսին իրականացրած անձնական գործունեության հետ կապված եկամուտը հաշվեգրվում է ոչ թե անհատապես արվեստի գործչին կամ մարզիկին, այլ մեկ ուրիշ անձի, ապա այդ եկամուտը, անկախ 7 և 14 հոդվածների դրույթներից, կարող է հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ իրականացվում է արվեստի գործչի կամ մարզիկի գործունեությունը:

3. Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում սույն հոդվածի 1 և 2 կետերում նշված գործունեությունից ստացված եկամուտները ազատվում են հարկումից այդ մյուս պետությունում, եթե այցելությունն այդ մյուս պետության ամբողջությամբ կամ գլխավորապես օժանդակվում է առաջինը հիշատակված Պայմանավորվող պետության հասարակական հիմնադրամների, քաղաքական ստորաբաժանումների կամ տեղական իշխանության մարմինների կողմից, կամ իրականացվում է Պայմանավորվող պետությունների կառավարությունների միջև մշակութային համաձայնագրի կամ ծրագրի շրջանակներում:

Հոդված 17
Կենսաթոշակներ և անուիտետներ

1. Հաշվի առնելով 18 հոդվածի 2 կետի դրույթները՝ Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարվող կենսաթոշակները և համանման այլ վարձատրությունները և անուիտետները ենթակա են հարկման առաջինը հիշատակված պետությունում:

2. «Անուիտետ» տերմինը նշանակում է հաստատուն գումար, որը սահմանված ամսաթվերին պարբերաբար վճարում է ամբողջ կյանքի ընթացքում կամ հաստատված կամ պայմանավորված ժամանակահատվածում, որպես դրամական կամ դրամական փոխարժեքին համարժեք և լիակատար վերադարձելի վճարում կատարելու պարտավորություն:

Հոդված 18
Պետական ծառայություն

1. a) Պայմանավորվող պետության կամ քաղաքական ստորաբաժանման կամ տեղական իշխանության մարմնի կողմից ֆիզիկական անձին՝ այդ պետությանը կամ ստորաբաժանմանը կամ իշխանության մարմնին մատուցած ծառայությունների դիմաց վճարված՝ կենսաթոշակից տարբերվող աշխատավարձը ռոճիկը և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ պետությունում:

b) Սակայն, այդպիսի աշխատավարձը և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ծառայությունները մատուցվում են այդ պետությունում և այդ պետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձը.

i) հանդիսանում է այդ պետության քաղաքացին կամ

ii) չի դարձել այդ պետության ռեզիդենտ բացառապես ծառայություններ մատուցելու նպատակով:

2. a) Պայմանավորվող պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանման կամ տեղական իշխանության մասնի կողմից, կամ նրանց կողմից ստեղծած հիմնադրամներից այդ պետությանը կամ իշխանությանը մատուցած ծառայությունների դիմաց ֆիզիկական անձին վճարված որևէ կենսաթոշակ ենթակա է հարկման միմիայն այդ պետությունում:

b) Սակայն, այդպիսի կենսաթոշակը ենթակա է հարկման միմիայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ֆիզիկական անձը հանդիսանում է այդ պետության ռեզիդենտն ու քաղաքացին:

3. 14, 15, 16 և 17 հոդվածների դրույթները կիրառվում են Պայմանավորվող պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանման կամ տեղական իշխանության մարմնի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հետ կապված ծառայությունների դիմաց աշխատավարձի և համանման վարձատրությունների և կենսաթոշակների նկատմամբ:

Հոդված 19
Ուսուցիչներ և հետազոտողներ

1. Ֆիզիկական անձը, որպես Պայմանավորվող պետության կառավարության կողմից հավատարմագրված համալսարանում, քոլեջում, դպրոցում կամ այլ համանման կրթական հաստատությունում կամ գիտահետազոտական ինստիտուտում ուսուցանելու, դասախոսելու կամ հետազոտական աշխատանք կատարելու նպատակով ժամանում է Պայմանավորվող պետություն և որը հանդիսանում է կամ անմիջապես մինչև ժամանելը հանդիսացել է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, առաջինը հիշատակված պետությունում ազատվում է ազատվում է հարկումից այդպիսի ուսուցման, դասախոսման կամ հետազոտական աշխատանքի դիմաց ստացված վարձատրության առնչությամբ՝ առաջինը հիշատակված պետություն իր առաջին ժամանման պահից սկսված 3 արին չգերազանցող ժամանակահատվածի համար:

2. Սույն հոդվածի 1 կետի դրույթները չեն կիրառվում հետազոտություններից ստացված եկամուտների նկատմամբ, եթե այդպիսի հետազոտությունները իրականացվում են ոչ թե հասարակական, այլ առավելապես որոշակի անձի կամ անձանց մասնավոր շահերի համար:

Հոդված 20
Ուսանողներ և ստաժորներ

1. Ուսանողը կամ ստաժորը, որոնք հանդիսանում են կամ անմիջապես մինչև Պայմանավորվող պետություն ժամանելը հանդիսացել են մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, և որը գտնվում է առաջինը հիշատակված պետությունում բացառապես իր ուսման կամ մասնագիտացման նպատակով, այդ մյուս պետությունում չի ենթարկվում հարկման իր ապրելու, ուսանելու կամ մասնագիտանալու համար ստացած վճարումներից, եթե այդպիսի վճարումները առաջանում են այդ պետությունից դուրս գտնվող աղբյուրներից:

2. 1 կետում չընդգրկված շնորհների, կրթաթոշակների և վարձու աշխատանքից ստացված վարձատրության նկատմամբ, 1 կետում հիշատակված ուսանողը կամ ստաժորը, միաժամանակ, այդպիսի ուսման կամ պրակտիկայի ընթացքում պետք է

իրավունք ունենա այնպիսի հարկային արտոնությունների, ազատումների կամ նվազեցումների, որոնցից օգտվում են իր ժամանման պետության ռեզիդենտները:

Հոդված 21
Այլ եկամուտ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ սույն Համաձայնագրի նախորդ հոդվածներում չհիշատակված եկամտի տարրերը, անկախ դրանց առաջացման վայրից, ենթակա են հարկման միայն այդ պետությունում:

2. 1 կետի դրույթները չեն կիրառվում 6 հոդվածի 2 կետում սահմանված անշարժ գույքի եկամտից տարբերվող եկամտի նկատմամբ, եթե այդպիսի եկամուտ ստացողը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացվում Պայմանավորվող պետությունում՝ այդ մյուս պետությունում գտնվող մշտական հաստատության միջոցով, կամ անկախ անձնական ծառայություններ է մատուցում մյուս Պայմանավորվող պետությունում՝ այդ մյուս պետությունում գտնվող հաստատուն բազայի միջոցով, և իրավունքը կամ գույքը. որոնց կապակցությամբ վճարվել է եկամուտը իրապես կապված է այդպիսի մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ: Այդ դեպքում կիրառվում են 7 հոդվածի դրույթները:

3. Անկախ 1 և 2 կետերի դրույթներից, Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ սույն Համաձայնագրի նախորդ հոդվածներում չհիշատակված և մյուս Պայմանավորվող պետությունում առաջացած եկամտի տարրերը կարող են հարկվել նաև մյուս պետությունում:

Հոդված 22
Կրկնակի հարկման բացառումը

Կրկնակի հարկումը բացառվում է հետևյալ կերպ.

1. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության ռեզիդենտը եկամուտ է ստանում, որը, սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան, ենթակա է հարկման մյուս Պայմանավորվող պետությունում, ապա առաջինը հիշատակված պետությունը թույլատրում է այդ ռեզիդենտի եկամտի հարկի նվազեցում՝ մյուս Պայմանավորվող պետությունում վճարված եկամտի հարկին հավասար գումարի չափով, պայմանով, որ այդպիսի նվազեցումը չպետք է գերազանցի մինչև նվազեցման տրամադրումը հաշվարկված հարկի այն մասը, որը վերագրելի է Պայմանավորվող պետությունում ստացված եկամտին,:

2. Սույն հոդվածի 1 կետի նպատակներով «վճարված կատարական հարկ» և «վճարված հայկական հարկ» տերմիններն ներառում են հարկի այն գումարը, որը, հանգամանքներից կախված, պետք է որ հարկվեր Կատարում կամ Հայաստանում, սակայն Պայմանավորվող պետության օրենքներին կամ կանոններին համապատասխան ազատվել է հարկից կամ նվազեցվել է:

Հոդված 24
Անխտրականություն

1. Պայմանավորվող պետության ազգային անձինք չեն ենթարկվում մյուս Պայմանավորվող պետությունում այլ կամ ավելի ծանր որևէ հարկման կամ դրա հետ

կապված որևէ պարտավորության, մասնավորապես, կապված ռեզիդենտության հետ, քան հարկումն ու դրա հետ կապված պարտավորությունները, որոնց միևնույն հանգամանքների դեպքում ենթարկվում են կամ կարող են ենթարկվել այդ մյուս պետության ազգային անձինք: Չնայած 1 հոդվածի դրույթներին, սույն դրույթը կիրառվում է նաև Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ չհանդիսացող անձանց նկատմամբ:

2. Մյուս Պայմանավորվող պետությունում Պայմանավորվող պետության ձեռնարկության ունեցած մշտական հաստատության հարկումը այդ մյուս պետությունում չպետք է լինի նվազ բարենպաստ, քան այդ մյուս պետության համանման գործունեություն իրականացնող ձեռնարկության հարկումը: Սույն դրույթը չպետք է մեկնաբանվի որպես պարտավորեցնող Պայմանավորվող պետությանը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտներին՝ քաղաքացիական կարգավիճակի կամ ընտանեկան հանգամանքների հիման վրա հարկման նպատակներով այնպիսի անձնական արտոնություններ, նվազեցումներ և զեղչեր տրամադրելու, ինչպիսիք Պայմանավորվող պետությունը շնորհում է իր սեփական ռեզիդենտներին:

3. Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են 9-րդ հոդվածի 1 կետի, 11 հոդվածի 6 կետի կամ 12 հոդվածի 6 կետի դրույթները, Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված տոկոսները, ռոյալթին և այլ վճարումները, այդպիսի ձեռնարկության հարկվող շահույթի որոշման նպատակով ենթակա են նվազեցման նույն պայմաններով, ինչպես առաջինը հիշատակված պետության ռեզիդենտին վճարելիս: Նմանապես, Պայմանավորվող պետության ձեռնարկության ցանկացած պարտքը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին, այդ ձեռնարկության հարկման ենթակա կապիտալի որոշման նպատակով ենթակա է նվազեցման նույն պայմաններով, ինչպես որ պարտքը առաջինը հիշատակված պետության ռեզիդենտին:

4. Պայմանավորվող պետության ձեռնարկությունները, որոնց կապիտալն ամբողջությամբ կամ մասամբ, ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում է մյուս Պայմանավորվող պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտներին կամ վերահսկվում է նրանց կողմից, չեն ենթարկվում առաջինը հիշատակված պետությունում այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված պարտավորության, քան հարկումը կամ դրա հետ կապված պարտավորությունները, որին ենթարկվում են կամ կարող են ենթարկվել առաջինը հիշատակված պետության այլ համանման ձեռնարկությունները:

Հոդված 24
Փոխհամաձայնեցման արարողակարգ

1. Այն դեպքում, երբ անձը գտնում է, որ Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցնում են կամ կհանգեցնեն նրա՝ սույն Համաձայնագրի դրույթներին չհամապատասխանող հարկմանը, ապա նա կարող է, այդ պետությունների ներքին օրենսդրությամբ նախատեսված պաշտպանության միջոցներից անկախ, ներկայացնել իր գործն այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին, որի ռեզիդենտն է հանդիսանում, կամ, եթե իր գործը վերաբերում է սույն Համաձայնագրի 23 հոդվածի 1 կետին՝ այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին, որի ազգային անձն է հանդիսանում: Այդպիսի գործը պետք է ներկայացվի երեք տարվա ընթացքում՝ սույն Համաձայնագրի դրույթներին չհամապատասխանող հարկման հանգեցնող գործողության մասին առաջին ծանուցման պահից:

2. Եթե իրավասու մարմինը դիմում-բողոքը համարում է արդարացի և եթե ինքն ի վիճակի չէ հանգելու գոհացուցիչ լուծման, ապա նա ձգտում է խնդիրը լուծել մյուս

Պայմանավորվող պետության իրավասու մարմնի հետ փոխհամաձայնությամբ՝ սույն Համաձայնագրին չհամապատասխանող հարկումը բացառելու նպատակով: Ցանկացած ձեռք բերված համաձայնություն պետք է իրականացվի՝ անկախ Պայմանավորվող պետությունների ներքին օրենսդրություններում առկա որևէ ժամանակային սահմանափակումից:

3. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման ընթացքում առաջացող ցանկացած դժվարություն կամ կասկած կձգտեն լուծել փոխհամաձայնությամբ: Նրանք կարող են նաև խորհրդակցել միմյանց հետ Համաձայնագրով չնախատեսված դեպքերում կրկնակի հարկումը բացառելու նպատակով:

4. Նախորդ կետերի առնչությամբ համաձայնության հասնելու նպատակով Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կարող են ուղղակի կապ հաստատել միմյանց հետ: Իրավասու մարմինները սույն հոդվածում նշված փոխհամաձայնեցման արարողակարգի իրականացման համար խորհրդակցությունների միջոցով կմշակեն համապատասխան երկկողմանի գործընթացներ, պայմաններ, մեթոդներ և մեխանիզմներ:

Հոդված 25
Տեղեկատվության փոխանակում

1. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կփոխանակեն այնպիսի տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են սույն Համաձայնագրի կամ Համաձայնագրում ընդգրկված հարկերի վերաբերյալ Պայմանավորվող պետությունների ներքին օրենքների դրույթների կիրառման համար՝ այնքանով, որքանով այդ օրենքներով սահմանված հարկումը չի հակասում սույն Համաձայնագրին: Տեղեկատվության փոխանակումը չի սահմանափակվում 1 հոդվածով: Պայմանավորվող պետության կողմից ստացված ցանկացած տեղեկատվություն համարվում է գաղտնի, ինչպես այդ պետության ներքին օրենսդրության սահմաններում ստացված տեղեկատվությունը և կարող է հայտնվել միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները և վարչական մարմինները), որոնք զբաղվում են Համաձայնագրով ընդգրկված հարկերի գնահատմամբ կամ գանձմամբ հարկադիր բռնագանձմամբ կամ դատական հետապնդմամբ կամ բողոքարկումների քննարկմամբ: Այդպիսի անձինք կամ մարմինները տեղեկություններն օգտագործում են միմիայն այդպիսի նպատակների համար: Նրանք կարող են հրապարակել տեղեկությունները բաց դատական նիստի ընթացքում կամ դատական որոշումների ժամանակ:

2. 1 կետի դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող.

a) իրականացնել այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներին և վարչական գործավարությանը հակասող վարչական միջոցառումներ,

b) ներկայացնել տեղեկատվություն, որը հասանելի չէ այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներով կամ սովորական վարչական գործավարության ընթացքում,

c) ներկայացնել տեղեկատվություն, որը կբացահայտի որևէ առևտրային, ձեռնարկատիրական, արդյունաբերական, կոմերցիոն կամ մասնագիտական գաղտնիք կամ առևտրական գործընթաց, կամ տեղեկատվություն, որի բացահայտումը կհակասի պետական քաղաքականությանը (հասարակական կարգին):

Հոդված 26
Դիվանագիտական և հյուպատոսական արտոնություններ

Սույն Համաձայնագրի ոչ մի դրույթ չի ազդում դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հաստատությունների անդամների միջազգային իրավունքի ընդհանուր կանոնների կամ հատուկ համաձայնագրերի դրույթների շրջանակներում տրամադրված ֆիսկալ արտոնությունների վրա:

Հոդված 27
Ուժի մեջ մտնելը

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի յուրաքանչյուր պետության ներքին օրենսդրությամբ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար սահմանված արարողակարգի ավարտի մասին հավաստող դիվանագիտական նոտաների փախանակման օրվանից 30 օր հետո: Սույն Համաձայնագիրը կգործի Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո սկսվող հարկային տարվա ընթացքում ստացված եկամուտների նկատմամբ:

Հոդված 28
Գործողության դադարեցումը

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմնա անորոշ ժամանակով, սակայն : Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրը ուժի մեջ մտնելու տարվանից 5 տարի անց ցանկացած օրացույցային տարվա մինչև հունիսի 30-ը մյուս Պայմանավորվող պետությունը դիվանագիտական ուղիներով կարող է փոխանցել դադարեցման մասին գրավոր ծանուցագիր: Այդ դեպքում Համաձայնագիրը կդադարեցնի իր գործողությունը դադարեցման մասին ծանուցագրի ստցման տարվան հաջորդող տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո սկսվող հարկային տարվա ընթացքում ստացված եկամուտների նկատմամբ:

Ի վկայություն որի՝ համապատասխան ձևով լիազորված ներքոստորագրյալները ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Կատարված է Դոհա քաղաքում 2002 թվականի ապրիլի 22-ին, երկու բնօրինակով, հայերեն, արաբերեն և անգլերեն: Բոլոր տեքստերը հավասարազոր են: Ցանկացած տարաձայնության առաջացման դեպքում գերակայությունը կտրվի անգլերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2007թվականի նոյեմբերի 6-ից: